ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandfb@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 4 » մայիսի 2021 թվականի № 16

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի ԹԻՎ 03 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 - րդ հոդվածի 6_րդ պարբերության պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արգավանդ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 4-ի թիվ 03 ավագանու նիստի օրակարգը

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը ուղղակի վաճառքի կարգով ինքնակամ կառուցապատողին օտարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փոստաթղթերի Արգավանդ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտեվորման նախագիծը) հաստատելու մասին:
3. Արգավանդ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանարապետության Արարատի մարզի Արգավանդ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտմերում, ըստ դրանց գտնվելու վայրի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը, համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները, սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների ենթակայմանը ներկայացվող պահանջները, քաղաքացիական հոգեհանգստի

շինություններին ներկայացվող պահանջները և պայմանները, համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները ու կարգը սահմանելու մասին:

Ավագանու անդամներ	կողմ (4)	դեմ (0)	ձեռնպահ (0)
1. Աղախանյան Արման			
2. Մարգարյան Տիգրան			
3. Նավասարդյան Վահագ			
4. Ոսկանյան Էլմիրա			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 4» մայիսի 2021 թվականի № 17

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, Հայաստան Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման հավելվածի 35-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18_ րդ հոդվածի 21 –րդ կետի պահանջները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատի մարզի Արգավանդ համայնքի վարչական տարածքում 03-018-0235-0016 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող երկաթգծի 3-րդ փողոցի թիվ 2/3 հասցեում գտնվող 0.00009 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը 14.559 /տասնչորս հազար հինգ հարյուր հիսունինը/ ՀՀ դրամով և ինքնակամ կառուցված 0.9 քմ արտաքին մակերեսով պարիսպը 28.854 /քսանութ հազար ութ հարյուր հիսունչորս / ՀՀ դրամով ուղղակի վաճառքի կարգով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Շավարշ Խաչատուրի Գևորգյանին:
2. Շավարշ Խաչատուրի Գևորգյանի հետ կնքել գույքի և հողամասի օտարման պայմանագիր:

Ավագանու անդամներ կողմ (կ) դեմ (0) ձեռնպահ(0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 4» մայիսի 2021 թվականի № 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 2 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 31.03.2021թ. թիվ 2-4 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Արգավանդ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններ (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)

Աղյուսակ 1.

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)
1	2	3	4	5
	Բնակավայրերի հողերից			
ԲԲ			Բնակավայրերի հողեր	
ԲԲ.1	Ընդհանուր օգտագործման	0.0813	Խառը կառուցապատման	0.0813
ԲԲ.2	Ընդհանուր օգտագործման	0.2107	Խառը կառուցապատման	0.2107
ԲԲ.4	Ընդհանուր օգտագործման	0.1604	Խառը կառուցապատման	0.1604
ԲԲ.5	Հասարակական կառուցապատման	0.2846	Տնամերձ	0.2846
ԲԲ.6	Բնակելի այլ	0.0850	Հասարակական կառուցապատման	0.0850
ԲԲ.7	Ընդհանուր օգտագործման	0.1705	Խառը կառուցապատման	0.1705
ԲԲ.8	Ընդհանուր օգտագործման	0.0847	Հասարակական կառուցապատման	0.0847
ԲԲ.9	Ընդհանուր օգտագործման	0.0452	Հասարակական կառուցապատման	0.0452
ԲԲ.10	Ընդհանուր օգտագործման	0.0336	Խառը կառուցապատման	0.0336
ԲԲ.11	Ընդհանուր օգտագործման	0.1717	Խառը կառուցապատման	0.1717
ԲԲ.12	Ընդհանուր օգտագործման	0.0506	Խառը կառուցապատման	0.0506
ԲԲ.13	Ընդհանուր օգտագործման	0.1003	Խառը կառուցապատման	0.1003
ԲԲ.14	Ընդհանուր օգտագործման	0.1184	Խառը կառուցապատման	0.1184
	Բնակավայրերի հողերից			
ԲԿ			Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	
ԲԿ.1	Բնակելի այլ	0.2000	կոմունալ (գերեզմանոց)	0.2000
	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների			
ԿԲ			Բնակավայրերի հողեր	
ԿԲ.1	Տրանսպորտի	0.0161	Հասարակական կառուցապատման	0.0161
	Գյուղատնտեսական նշանակության հողերից			
ԳԲ			Բնակավայրերի հողերի	
ԳԲ-1	վարելահող	1.0788	Տնամերձ	1.0788
	Բնակավայրերի հողերից			
ԲՊ			Հատուկ պահպանվող տարածքների հողեր	
ԲՊ.1	Ընդհանուր օգտագործման	0.0044	Պատմական և մշակութային	0.0044
ԲՊ.2	Ընդհանուր օգտագործման	0.0046	Պատմական և մշակութային	0.0046
	Հատուկ պահպանվող տարածքների			
ՀպԿ			Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	
ՀպԿ.1	Հատուկ պահպանվող	1.1415	Գերեզմանոց (գոյություն ունեցող)	1.1415

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ

Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման

տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandfb@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 4» մայիսի 2021 թվականի № 19

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18_ րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արգավանդ համայնքում հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի , և հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N2 հավելվածի:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Հավելված 1

Արգավանդ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 4-ի թիվ 19 որոշման

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ

N	Իրազեկման հեղինակի կամ հավաքի կազմակերպչի տվյալները	Իրազեկման օրը, ժամը	Հավաքի բնույթը և նպատակը	Հավաքի վայրը	Հավաքի օրը, սկիզբը և ավարտի մոտավոր ժամանակը	Մասնակիցների սպասվող թիվը	Լիազոր մարմնի որոշումը

Հավելված 2

Արգավանդ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 4-ի թիվ 19 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույնով սահմանվում է Արգավանդ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը:
2. Գրանցամատյանի պահպանումը և վարումն իրականացվում է Արգավանդ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձի պատասխանատվությամբ:
3. Գրանցամատյանը տպագրվում է մեկ օրինակից, էջերը համարակալվում են ըստ հերթականության:
4. Գրանցամատյանը կարվում է և կնքվում է Արգավանդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից:
5. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության:
6. Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրառվում է իրազեկման հեղինակի և հավաքի կազմակերպչի տվյալները (կազմակերպիչների անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները).

3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման օրը, ժամը.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի բնույթը և նպատակը (հանրահավաք, երթ).

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի օրը, սկիզբը և ավարտի մոտավոր ժամանակը.

7) 7-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

8) 8-րդսյունակում գրառվում է լիազոր մարմնի որոշման վերաբերյալ տեղեկատվություն (որոշման ամսաթիվը, համարը):

7. Լրացուցիչ տեղեկությունների համար նախատեսված տեղում գրառվում են հետևյալ տեղեկությունները՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները, կարգադրիչների նախատեսվող թիվը, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնությունը, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշումը և այլն:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով սահմանվում է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին:

Ելնելով վերոգրյալից Արգավանդ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Արգավանդ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» Արգավանդ համայնքի ավագանու որոշման նախագիծը:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արգավանդ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» Արգավանդ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արգավանդ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» Արգավանդ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արգավանդ բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն առաջանում:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandfb@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 4» մայիսի 2021 թվականի № 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ,ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ, ԸՍՏ ԴՐԱՆՑ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՈՒՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՇԵՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18_ րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ , 40-րդ, 40.1-րդ , 41.1-րդ, 41.2 –րդ կետերի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արգավանդ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել Արգավանդ համանքի վարչական տարածքում առևտրի և հանրային ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռության կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Հաստատել Արգավանդ համանքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները՝ համաձայն թիվ 3 հավելվածի:
4. Հաստատել Արգավանդ համանքի վարչական տարածքում գործող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների ենթակայման ներկայացվող պահանջները՝ համաձայն թիվ4հավելվածի:
5. Հաստատել Արգավանդ համանքի վարչական տարածքում գործող քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայություններ .իրականացնող և մատուցող շենքերին և շինություններին ներկայացվող պահանջները և պայմանները՝ համաձայն թիվ 5 հավելվածի:
6. Հաստատել Արգավանդ համանքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ համաձայն թիվ 6 հավելվածի:

Ավագանու անդամներ կողմ (✓) դեմ (○) ձեռնպահ(○)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Հավելված 1

Արգավանդ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի -ի թիվ 20 որոշման

ԿԱՐԳ

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

Սույն հավելվածում օգտագործվող հասկացություններն են՝

հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

Հանրային սննդի ծառայություններն իրականացնում են **իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:**

Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:

Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառքը:

Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:

Օրենքով սահմանված շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:

Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):

Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ վկայականի համարի նշմամբ:

Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

Աշխատողներից՝ բարմենը, խոհարարը, հրուշակագործը, մատուցողը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:

Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:

Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

Հավելված 2

Արգավանդ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 4-ի թիվ 20 որոշման

ԿԱՐԳ

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի ղեկավարը <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1 կետի համաձայն սահմանում է առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը, մասնավորապես՝

1. Համայնքի բնակելի գոտում գործունեություն իրականացնող օբյեկտների համար՝ 22:00 մինչև 07:00 ընկած ժամանակահատվածը

2. Համայնքի բնակելի գոտուց դուրս գտնվող տարածքներում գործունեություն իրականացնող օբյեկտների համար ՝ 24:00-ից մինչև 07:00 ընկած ժամանակահատվածը

Հավելված 3

Արգավանդ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 4-ի թիվ 20 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԻ, ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետը, <<Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 18.06.2015թ.թիվ 595-Ն հրամանը՝ սահմանել համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները.

Հրագործական արտադրատեսակները (այսուհետ՝ ՀԱՏ)՝ ըստ նշանակության և օգտագործման պայմանների բաժանվում են երկու խմբի.

1) բնակչությանը ազատ վաճառվող կենցաղային նշանակության ՀԱՏ-եր, որոնց հետ վարվելը չի պահանջում հատուկ գիտելիքներ ու հմտություն և, ճշտությամբ կատարելով դրանց փաթեթավորման վրայի գրված օգտագործման կարգը, ապահովվում է մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունը,

2) տեխնիկական և հատուկ նշանակության ՀԱՏ-եր, որոնց հետ վարվելը պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների (օգտագործողների) համապատասխան որակավորում և տեխնիկական սարքավորման համար որոշակի պայմանների ապահովում:

ՀԱՏ-երի շրջանառության ժամանակ հրդեհային անվտանգության հիմնական պահանջներն են՝

1) մանրածախ վաճառքի են թույլատրվում միայն կենցաղային նշանակության ՀԱՏ-ը,

2) իրացվող բոլոր ՀԱՏ-ը պետք է ունենան սահմանված նմուշի անվտանգության արտոնագիր,

3) ՀԱՏ-ի մանրածախ վաճառքը թույլատրվում է միայն մասնագիտացված խանութներում կամ խանութների վերին հարկերում տեղաբաշխված հատուկ բաժիններում,

4) ՀԱՏ-ի վաճառքի բաժինները պետք է ապահովված լինեն նորմատիվային քանակով սկզբնական հրդեհաշիջման միջոցներով (ոչ պակաս, քան երկու կրակմարիչներով),

5) ՀԱՏ-ի իրացման տեղերում թույլատրվում է պահել մեկ կոմպլեկտ բացված փաթեթավորում (արկղ),

6) չի թույլատրվում ՀԱՏ-ի վաճառքի առանձին բաժինները տեղակայել ելքերից, աստիճանավանդակներից 4 մետրից մոտ, նախամուտքերում և տարահանման ճանապարհներին:

Յուրաքանչյուր ՀԱՏ-ի համար պետք է ներկայացվի օգտագործման հրահանգ հայերեն լեզվով, որը պետք է լինի ընթեռնելի և պարունակի՝

1) օգտագործման և վարվելու սահմանափակումների պայմանները,

2) անվտանգ նախապատրաստման, թողարկման և խոտանման (անհրաժեշտության դեպքում) եղանակները,

3) պիտանելիության և պահման ժամկետները, ինչպես նաև պատրաստման ամսաթիվը,

4) ապրանքի վտանգավորության մասին նախազգուշացում,

5) արտադրողի տվյալները,

6) այլ տեղեկություններ, կապված արտադրատեսակի առանձնահատկությունների հետ:

ՀԱՏ-ի օգտագործումից առաջ հարկավոր է՝

1) նախապես որոշել (ընտրել) հրավառություն անցկացնելու վայրը, տարածքի չափերը պետք է համապատասխանեն արտադրատեսակի վրա նշված վտանգավոր տարածքի մաքսիմալ չափերին, տարածքում չպետք է լինեն ծառեր, էլեկտրահաղորդման լարեր և այլ օդային արգելքներ,

2) չթույլատրել հրավառության անցկացումը ուժեղ քամու և անձրևի պայմաններում,

3) արտադրատեսակը ամուր ամրացնել թողարկման տեղում՝ համաձայն օգտագործման կանոնների:

ՀԱՏ-ի հետ շփվելիս չի թույլատրվում՝

1) օգտագործումից առաջ և հետո արտադրատեսակները կազմաքանդել կամ փոխել կոնստրուկտիվ ձևը,

2) 18 տարեկանը չլրացած անձանց կողմից օգտագործելը,

3) արտադրատեսակների մոտ ծխելը,

4) արտադրատեսակները մեխանիկական ազդեցության ենթարկելը,

5) արտադրատեսակները գցելը և նրանցով հարվածելը,

6) արտադրատեսակները կրակի մեջ նետելը,

7) ՀԱՏ-ը օգտագործել շինություններում (բացառությամբ բենգալյան կրակների և տորթերի համար նախատեսված մոմերի),

8) գործարկված ՀԱՏ-ը պահել ձեռքում (բացառությամբ բենգալյան կրակների և տորթերի համար նախատեսված մոմերի):

Հատուկ նշանակության ՀԱՏ-ի օգտագործումը չի թույլատրվում՝

1) ցանկացած տիպի շենքերում, շինություններում և կառույցներում,

2) պայթյունահրդեհավտանգ օբյեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերի, ինչպես նաև բարձր լարման էլեկտրահաղորդալարերի մոտակա տարածքներում,

3) տանիքներում, պատշգամբներում, շենքերի ճակատների ելուստային մասերում,

4) բեմահարթակներում, մարզադաշտերում և այլ մարզական կառույցներում,

5) կամուրջների վրա, ճամփաբաժաններին, տրանսպորտային մայրուղիներում, երկաթգծի հանգույցներում, հակահրդեհային անբավարար վիճակում գտնվող տարածքներում,

6) միտինգների, ցույցերի և քայլերթերի ժամանակ:

ՀԱՏ-ի խոտանման ժամանակ պետք է կատարվեն հետևյալ գործողությունները՝

1) եթե պատրույգը հանգել կամ այրվել է և արտադրատեսակը չի գործարկվել, ապա հարկավոր է սպասել 10 րոպե ու համոզվել, որ այն այլևս չի գործարկվի, նոր մոտենալ սարքին,

2) հավաքել և վերացնել չգործարկված ՀԱՏ-ը: Դրանք վերացնում են 24 ժամ պահելով ջրի մեջ, այնուհետև կարելի է նետել կենցաղային աղբի մեջ,

3) ՀԱՏ-ի ոչնչացումը խարույկի (կրակի) միջոցով չի թույլատրվում:

ՀԱՏ-ը պահվում են հատուկ պահոցներում կամ այդ նպատակի համար նախատեսված այլ շինություններում, որոնց պատերը ունեն 2.5 ժամ հրակայունության աստիճան, արկղերում կամ երկաթյա պահարաններում, որոնց պատերի հաստությունը 3մմ-ից ոչ պակաս է:

ՀԱՏ-ի պահոցները պետք է մեկուսացված լինեն ծառայողական սենյակներից և մուտքի դուռը պետք է ունենա 45 րոպե հրակայունության աստիճան:

Չի թույլատվում ՀԱՏ-ը պահել առևտրային սրահներում, տարահանման ճանապարհներին, հանդիսարանային դահլիճներում, մարզադաշտերի շենքերում և տրիբունաներում, մշակույթի և հանգստի զբոսայգիներում, մարդկանց մեծ կուտակումներով վայրերում:

ՀԱՏ-ի պահոցները չի կարելի տեղակայել նկուղային հարկերում:

ՀԱՏ-ի պահոցները պետք է ունենան շանթարգելներ:

Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն թույլատրվում է իրականացնել համայնքի հետևյալ տարածքներում՝ հրապարակներում, գործող ռեստորանային համալիրների տարածքում, մարզադաշտերում , հրավառություն իրականացնելը պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների համապատասխան որակավորում և տեխնիկական սարքավորումների որոշակի պայմանների ապահովում:

Հավելված 4

Արգավանդ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 4-ի թիվ 20 որոշման

ԿԱՐԳ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հավելվածում օգտագործվող հասկացություններն են՝

սահմանափակման ենթակա ծառայություն՝ սպառողների ժամանցի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված որոշ ծառայությունների համալիր, որոնք մատուցվում են սույն օրենքով սահմանված սահմանափակման ենթակա ծառայությունների օբյեկտներում.

սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ՝ կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա.

կարաոկե՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ հաճախորդը, օգտագործելով նախապես ընտրված երգի ինտերակտիվ նվագակցությունը, ցուցադրում է սիրողական երգեցողություն.

դիսկոտեկ՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ բարդ ձայնային և լուսավորման համակարգերի ներքո, մշտական պարահրապարակի առկայությամբ, ինչպես նաև վերարտադրված երաժշտության մատուցմամբ, կազմակերպվում են պարային միջոցառումներ.

հեստապարային ակումբ՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ կազմակերպվում է հեստապար.

հեստապար՝ պարերով և (կամ) երաժշտությամբ ուղեկցվող բեմական ներկայացում, որի մասնակիցները ներկայացման ընթացքում աստիճանաբար մասամբ կամ լրիվ մերկանում են.

բաղնիք, սաունա և շոգեբաղնիք՝ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հյուրանոցային տնտեսության օբյեկտների մաս չկազմող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ:

Սույն կետի իմաստով հյուրանոցային տնտեսության օբյեկտի մաս չի համարվում հյուրանոցատիպ հանգրվանում մատուցվող ծառայությունը, որտեղ մատուցվող ծառայությունները չեն ներառում առնվազն մեկ գիշերակաց կամ չի վարվում հաճախորդի կամ հաճախորդի համար ամրագրում կատարող անձի վերաբերյալ տվյալների պատշաճ տեղեկատվության (ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային, իրավաբանական անձանց համար պետական գրանցման տվյալներ, ինչպես նաև հյուրանոցային համարի ամրագրման և զբաղեցման ժամկետների վերաբերյալ) ստացման և պահպանման գործավարություն:

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետը և <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 15.2 և 15.3 հոդվածները՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները Արգավանդ համայնքի վարչական տարածքում կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից հաստատություններից, պետական կառավարման և տեղական

ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից նվազագույնը 200 մետր հեռավրության վրա.

Բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 20 մետր հեռավորության վրա:

Անհատական բնակելի տների և հանրային սննդի օբյեկտների, հյուրանոցների և Այնթապ համայնքի վարչական տարածքում գտնվող <<Առևտրի և ծառայությունների մասին>>. << օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների միջև վերոնշյալ հեռավորությունը կարող է չպահպանվել անհատական բնակելի տան, հանրային սննդի օբյեկտի, հյուրանոցի սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Հավելված 5

Արգավանդ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 4-ի թիվ 20 որոշման

ԿԱՐԳ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հավելվածով սահմանվում են Արգավանդ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայությունների իրականացման և մատուցման համար նախատեսված շենքերին ու շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:

Քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվությունը տալիս է Արգավանդ համայնքի ղեկավարը՝ ընթացիկ տարվա տեղական տուրքի վճարման անդորրագրի հիմա վրա, եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրման պահին համապատասխանում է սույն հավելվածով սահմանված սահմանափակումներին, պահանջներին և պայմաններին:

Առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայությունների իրականացումը և մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝

1. ուսումնական, կրթական, մշակութային, առթղջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 100 մետր, իսկ անհատական բնակելի տներից նվազագույնը 70 մետր հեռավորության վրա, եթե դրանք գտնվելու են՝

1.գերեզմանատներին կից՝ գերեզմանատների զբաղեցրած հողամասի սահմանից մինչև 50 մետր հեռավորության վրա

2.միայն անհատական բնակելի տներից և հանրային սննդի օբյեկտներից վերը նշված հեռավորության վրա, եթե առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը

Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին և պայմաններին և պետք է ունենան

ա) նախասրահ՝ հանդերձարանով

բ)հանգուցյալի մարմնի և աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ

գ) շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման համար առանձնացված վայր

դ) սանհանգույց

ե) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորմամբ սենյակ

Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար՝ առնվազն մինչև հանգուցյալի մարմնի և աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ, զուգարան և առաջին բժշկական օգնության սենյակ մուտք գործելու համար:

Պետք է ունենա Հայաստանի Հանրապետության 2002թ. մարտի 19-ի Ն270 որոշման պահանջներին համապատասխան և հասցեի նշմամբ ցուցանակներ:

Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահին կից պետք է լինի հանգուցյալի մարմնի և աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 100 քառ.մետր մակերեսով տարածք՝ քաղաքացիական հոգեհանգստի արարողությանը մասնակցող անձանց գտնվելու համար՝ ապահովված աղբամաններով, լուսավորությամբ և ծխելու համար նախատեսված հատվածով:

Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր:

Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը շահագործողը քաղաքացիական հոգեհանգստի սրահում ծառայությունների իրականացման և մատուցման ընթացքում պետք է ապահովի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահպանումը:

Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահում՝ հանգուցյալի մարմնի և աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպքում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք, նախասրահ, սանհանգույց:

Հավելված 6

Արգավանդ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 4-ի թիվ 20 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները (այսուհետ՝ պայմաններ) մշակվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին» (այսուհետ՝ կարգ) համապատասխան:

2. Արգավանդ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) միջոցների տեղադրումը թույլատրվում է սույն կարգի և պայմանների պահանջներին համապատասխան:

Գովազդը պետք է լինի օրինական, հավաստի և պատշաճ:

Հայաստանի Հանրապետությունում գովազդի լեզուն գրական հայերենն է:

Գովազդի շարադրանքը պետք է ապահովի գրական հայերենի անաղարտությունը, պահպանի ամրագրված լեզվական կանոնները:

Հայաստանի Հանրապետության տարածքում միայն օտար լեզվով գովազդն արգելվում է: Սույն դրույթը չի տարածվում օտար լեզուներով գրանցված ապրանքային նշանների և մակնիշների վրա:

Գովազդատուի հայեցողությամբ անհրաժեշտության դեպքում գովազդի շարադրանքը կարող է զուգորդվել երկու և ավելի օտար լեզուներով, որոնց ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի հայերեն շարադրանքի ծավալը (մակերեսը) և չներառի տեղեկատվություն, որը ներառված չէ հայերեն շարադրանքում:

Գովազդի հայերեն շարադրանքը պետք է լինի օտար լեզվով շարադրանքից առաջ կամ առջևից՝ վերևից ներքև կամ ձախից աջ գրությամբ:

Գովազդի օտարալեզու շարադրանքն իր պատկերային, գունային կամ լուսային լուծումներով չպետք է գերազանցի հայերեն շարադրանքը:

Հայաստանի Հանրապետության տարածքում օտար լեզուներով լույս տեսնող հրատարակություններում և օտար լեզվով հեռարձակվող հաղորդումներում օտար լեզվով գովազդին չզիջող ծավալով (մակերեսով) հայերեն զուգորդված շարադրանքը պարտադիր է:

Արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով:

Արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

Արգելվում է գովազդ տեղադրել թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների ներսում, ինչպես նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերում և նրանց տարածքում:

Գովազդ տեղադրելուն ներկայացվող պահանջներն են՝

1) գովազդի միջոցները չպետք է՝

ա. խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը, խանգարեն փողոցների ու մայթերի մեքենայացված մաքրմանը.

բ. սահմանափակեն տեսանելիությանը ավտոճանապարհների վրա.

գ. առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում լույսով, այդ թվում նաև անդրադարձող.

դ. արգելք հանդիսանան հետիոտնի շարժմանը.

ե. լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա.

2) ցանկացած տիպի գովազդի միջոցների տեղադրումը պետք է հիմնավորել համապատասխան նախագծային և տեսողական ընկալման դիտակետից.

3) գովազդ տեղադրել չի թույլատրվում՝

ա. բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր.

բ. թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում.

գ. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա և դրանց տարածքներում (պետական հաշվառման վերցրած պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակույթային այլ արժեք ունեցող կառույցների, դրանց համակառույցների և համալիրների, իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքների վրա, ինչպես նաև պատմամշակութային արգելանոցներում):

դ. ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

4) Այնթապ համայնքի հրապարակներում, ինչպես նաև դրանց համար մուտքեր և ելքեր հանդիսացող տարածքների առանձին տեղերում կարող է տեղադրվել գովազդ, եթե այն չի խոչընդոտում ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը և հրապարակների կառուցապատման տեսողական ընկալմանը:

ԳՈՎԱԶԴԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից:

1) Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝
ա. մեծ չափերի - 3մx4մ, 3մx6մ և այլ չափերի '

բ. միջին չափերի - 1.8մx1.2մ, 2մx3մ

գ. փոքր չափերի - 0.6մx0.9մ և ավելի փոքր չափերի.

2) վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

ա. երկկողմանի կատարում

բ. միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է.

3) Արգավանդ համայնքի կենտրոնական հատվածի սահմաններում թույլ է տրվում 0.6մx0.9մ, 1.8մx1.2մ, ինչպես նաև 3մx4մ մակերեսով տեղեկատու դաշտով վահանակների տեղադրումը.

4) Արգավանդ համայնքի կենտրոնական հատվածում տեղադրվող տեղեկատու դաշտով գովազդային վահանակի կրող հիմնասյան դիրքը պետք է լինի միայն ուղղահայաց.

5) Արգավանդ համայնքում 3մx6մ և այլ չափերի տեղեկատու դաշտով գովազդային վահանակների տեղադրումը թույլատրվում է համապատասխան նախագծային հիմնավորման առկայության դեպքում.

6) Արգավանդ համայնքի կենտրոնական հատվածից դուրս կարող են լինել 1.8մx 1.2մ, 3մx4մ, 3մx6մ տեղեկատու դաշտով և այլ չափերի վահանակներ.

7) մայրուղիներում և պողոտաներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

ա. 15քմ – 18քմ և այլ չափերի 150մ-200մ

բ. 10քմ – 15 քմ՝ 100մ – 150մ

գ. 6քմ – 10քմ՝ 50մ – 75մ

դ. 4քմ – 6քմ՝ 30մ – 50մ

ե. 2քմ – 4քմ՝ 15մ – 25մ

զ. մինչև 2քմ՝ 10մ – 15մ.

8) Նեղ փողոցներում և նրբանցքներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

ա. 10քմ – 12քմ՝ 50մ – 75մ

բ. 6քմ – 10քմ՝ 30մ – 50մ

գ. 4քմ – 6քմ՝ 20մ – 30մ

դ. 2քմ – 4քմ՝ 10մ – 20մ

ե. մինչև 2քմ՝ 10մ.

9) մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկայության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ, որոնց տեղադրումը համապատասխանում է մայրուղիների, փողոցների և քաղաքային գոտիների արտաքին ձևավորմանը ներկայացվող պահանջներին:

6. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Այնթապ համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղադրվող գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակներն են.

1) տանիքային կայանքները ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

ա. Տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից:

բ. Տանիքային կայանքները պետք է ունենան հակահրդեհային և հոսանքի վթարային անջատման համակարգ:

գ. Ամրակցման տարրերը, ինչպես նաև կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով:

դ. Տանիքային կայանքի տեղադրման հայտերն ընդունվում են պատվիրատուի կողմից մասնագիտական փորձաքննություն անցած կոնստրուկցիաների և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծի առկայության դեպքում:

2) Պատի մեծանկարներ (պաննո) են կոչվում գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

ա. պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտածածկում է պատը, պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից.

բ. պատի մեծանկարները կատարվում են անհատական նախագծի հիման վրա.

գ. պատի մեծանկարները պարտադիր պետք է ունենան համապատասխան փորձաքննություն անցած կոնստրուկցիաների նախագիծ.

դ. պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

3) Բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուններին կամ շենքերի վրա: Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել համայնքային լուսավորման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա:

ա. Բարձակները պետք է լինեն երկկողմանի տեսքով և ունենան ներքին լուսավորում:

բ. Հիմքերի վրա (ուղղահայաց) տեղադրվող բարձակների տիպային չափերն են՝ 1.8մx1.2մ (մայրուղիների, պողոտաների, հրապարակների համար), 0.6մx0.9մ, 1.0մx0.7մ

(նեղ փողոցների և նրբանցքների համար) և ավելի փոքր: Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3 մետր բարձրության վրա:

գ. Հիմքերի վրա տեղադրված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայթի կողմը: Արգելվում է մեկից ավել բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:

դ. Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է երկու կողմերիընդհանուր մակերեսով:

7. Կրկնաձիգ գրաժապավենը (տրանսպարանտ) գովազդի տեղեկատվության միջոց է: Այն բաղկացած է հիմքից, ամրացման սարքավորումից և տեղեկատու պատկերից:

1) Գրաժապավենների հեռավորությունն իրարից պետք է լինի 50մ-ից ոչ պակաս:

2) Գրաժապավենների բարձրությունը պետք է լինի երթևեկության գծի համեմատ 5մ-ից ոչ պակաս:

3) Տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է երկու կողմերի մակերեսով:

8. Էկրանավորող սարքավորումները գովազդի և տեղեկատվության միջոց են:

1) Դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր:

2) Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

9. Գովազդի վահանակների միջև եղած հեռավորությունն ըստ տրանսպորտային միջոցների թույլատրվող արագության պետք է կազմի՝

1) 60 կմ/ժ թույլատրվող արագությամբ փողոցների համար մեկ ուղղությամբ երկու վահանակների միջև հեռավորությունը՝

ա. 18քմ – 150մ

բ. 15քմ – 100մ

գ. 6քմ – 50մ

դ. 2քմ – 25մ

2) 60 կմ/ժամ թույլատրվող արագությունից պակաս փողոցների համար մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը՝

ա. 18քմ – 80-100մ

բ. 6քմ – 45-50մ

գ. 2քմ – 20-30մ

10. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ-ից ոչ պակաս բարձրության վրա:

11. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան՝ մեկ ամսվա ընթացքում վերականգնելով սիզամարգի ծածկույթը:

12. Չափորոշիչներում չնշված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումը թույլատրվում է Արգավանդ համայնքի ղեկավարի որոշմամբ:

ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Թույլտվությունը (հետագայում՝ թույլտվություն) «Տեղական ինքնակառավարման մասին» , «Գովազդի մասին» ՀՀ օրենքների համաձայն և Կանոններով և Չափորոշիչներով սահմանված կարգով տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
2. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, գտնվելու վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:
Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:
3. Գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը Չափորոշիչների և Կանոնների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղաբաշխման (տեղադրման) ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:
4. Թույլտվությունը հանդիսանում է հաշվառման փաստաթուղթ, որը գրանցվում է համայնքապետարանի թույլտվությունների հաշվառման մատյանում, իսկ թույլտվության պատճենը և հաշվառման մատյանը պահվում են համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժանում կամ բաժիններում:
5. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի), հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում, եթե՝ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Չափորոշիչների և Կանոնների պահանջներին.
խախտվում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջները.
գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը::
6. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

7. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է համայնքապետարան՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը:
8. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի, Չափորոշիչների, Կանոնների և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջներին:
9. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Արգավանդի համայնքապետարանի աշխատակազմի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:
10. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:
11. Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:
12. Կանոններով և Չափորոշիչներով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Արգավանդ համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է համայնքապետարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում: